ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«13» Մարտի 2023 **թվականի** N 609-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ 14 ՇԵՆՔ N 49-50 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 14 շենքի N 49-50 հասցեի բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Կարեն Հրաչյայի Մանուկյանին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 16012020-08-0010 վկայական):

Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 14 շենքի N 49-50 հասցեի բնակարանը անժամկետ վարձակալության իրավունքով տրամադրված է «ԱՎԵՐՍ» փակ բաժնետիրական ընկերությանը (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 10032020-08-0030 վկայական):

«ԱՎԵՐՍ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Կարո Շահբազյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին վարձակալության իրավունքով տրամադրված Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 14 շենք N 49-50 հասցեի բնակարանի 65,12 (վաթսունհինգ ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանի նպատակային նշանակությունը հասարակականի, գործառական նշանակությունը՝ որպես առևտրի և սպասարկման օբյեկտ փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի», հիմք ընդունելով «ԱՎԵՐՍ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Կարո Շահբազյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի փետրվարի 23-ին N 2832 թվագրմամբ).՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Փոփոխել Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 14 շենք N 49-50 հասցեի բնակարանի 65,12 (վաթսունհինգ ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանի նպատակային նշանակությունը հասարակականի, գործառական նշանակությունը՝ որպես առևտրի և սպասարկման օբյեկտ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին «ԱՎԵՐՍ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Կարո Շահբազյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

13.03.2023

X

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«13» մարտի 2023 **թվականի** N 608Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԴԱՎԻԹ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Դավիթ Աբրահամյանի 2023 թվականի մարտի 6-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի մարտի 6-ին 3620 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Դավիթ Աբրահամյանին Գյումրի քաղաքի Արագած 14 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Դավիթ Աբրահամյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

13.03.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«13» մարտի 2023 **թվականի** N 607-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հարություն Ղազարյանի 2023 թվականի մարտի 2-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի մարտի 2-ին 3496 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Հարություն Ղազարյանին Գյումրի քաղաքի Արագած 14 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Հարություն Ղազարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

13.03.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«13» հուլիսի 2023 թվականի №606-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 58.02 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի ք. Ն. Ղորղանյան փողոցի հարևանությամբ գտնվող 58.02 քմ մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0749-0022) տրամադրել հասցե՝

**ԳՅՈՒՄՐԻ Ք., Ն. ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 240/2:**

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«13» [illegible] 2023 թվականի № 605-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԴՈՒԴԿՈՅԻ ՓՈՂՈՑ, 6/6 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՄԱՍԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0157-0031) ԵՐԵՔ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Սիրանուշ Մարտիկյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №3864 թվագրմամբ), չափագրման արտոնագիր ունեցող «Սոս Մինասյան Մամիկոնի» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման և հատակագծերը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1) 46.20 քմ մակերեսով հողամասը հասցեավորել՝
**ԳՅՈՒՄՐԻ Ք., ԴՈՒԴԿՈՅԻ ՓՈՂՈՑ, 6/6:**
2) 249.90 քմ մակերեսով հողամասը հասցեավորել՝
**ԳՅՈՒՄՐԻ Ք., ԴՈՒԴԿՈՅԻ ՓՈՂՈՑ, 6/7:**
3) 280.00 քմ մակերեսով հողամասը հասցեավորել՝
**ԳՅՈՒՄՐԻ Ք., ԴՈՒԴԿՈՅԻ ՓՈՂՈՑ, 6/8:**

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«13» մարտի 2023 թվականի № 604-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՖՈՒՐՄԱՆՈՎԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 29.91ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի ք. Դ. Ֆուրմանովի փողոցի հարևանությամբ գտնվող 29.91քմ մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-2536-0001) տրամադրել հասցե՝

**ԳՅՈՒՄՐԻ Ք., Շ. ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, 69/3:**

13.03.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«13» Հուլիսի 2023 թվականի № 603-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 33.6 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ԹՎՈՎ 4 (ՉՈՐՍ) ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասի 9-րդ փողոցի հարևանությամբ գտնվող 33.6 քմ մակերեսներով թվով 4 (չորս) հողամասերին (կադաստրային ծածկագիր 08-001-0083-0001) տրամադրել հասցեներ՝

1) **ԳՅՈՒՄՐԻ Ք., ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑ, 2/37:**
2) **ԳՅՈՒՄՐԻ Ք., ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑ, 2/38:**
3) **ԳՅՈՒՄՐԻ Ք., ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑ, 2/39:**
4) **ԳՅՈՒՄՐԻ Ք., ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑ, 2/40:**

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«13» Ապրիլի 2023 թվականի № 602-Ա

**ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի №630 ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 06-Ի №241–Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՓՈՂՈՑ (ԼԵՆԻՆԻ ՊՈՂՈՏԱ), 7 ՇԵՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Հայկ Կաղինյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №3806 թվագրմամբ) ''

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրու քաղաքապետի 1997 թվականի օգոստոսի 30-ի №241 և Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 06-ի №241–Ա որոշումներով Տիգրան Մեծի փողոց (Լենինի պողոտա), 7 շենքում գտնվող անշարժ գույքին տրամադրել հասցե՝

**ԳՅՈՒՄՐԻ Ք., ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՓՈՂՈՑ, 7 ՇԵՆՔ, 9/1:**

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«13» մարտի 2023 թվականի №601-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑ, 109/4 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 32.53 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 32.53 ՔՄ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇՎԱՔԱՐԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Գորկու փողոց, 109/4 հասցեի բնակելի տանը կից ինքնակամ զբաղեցրած 32.53 քմ մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 32.53 քմ արտաքին մակերեսով շվաքարանին տրամադրել հասցե՝

**ԳՅՈՒՄՐԻ Ք., Մ. ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑ, 109/8:**

13.03.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## ՈՐՈՇՈՒՄ

«13» [illegible] 2023 թվականի №600-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի №1750-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոի 11–ի «Գյումրի ք. Տեքստիլագործների փողոց 29/5 հասցեագրությամբ արտադրամասը երկու մասերի բաժանելու նպատակով նոր հասցեներ տրամադրելու մասին» №1750-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման կայացման մեջ «102.64», «62.78» թվերը փոխարինել համապատասխանաբար «103.10», «61.54» թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«13» Սեպտեմբեր 2023 թվականի № 599Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄԱՅԻՍՅԱՆ (ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆ) ՓՈՂՈՑ, 37 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Աիդա Մարգարյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված № 3240 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի ք., Մայիսյան (Մ. Մկրտչյան) փողոց, 37 հասցեագրությամբ անշարժ գույքը (կադաստրային ծածկագիր 08-001-0632-0015) վերահասցեավորել՝

**ԳՅՈՒՄՐԻ Ք., Մ. ՄԿՐՏՉՅԱՆ ՓՈՂՈՑ, 37/1:**

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«13» մարտի 2023 թվականի №598-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի №1419-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՏԻԳՐԱՆ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՄՈՐԸ՝ ՄԱՐԳԱՐԻՏ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### I.ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի(այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 19-րդ հոդվածի, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «ՀՀ ՊՆ համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված(մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» №1419-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի 1-ին ենթակետի դրույթը(բարելավվել են նրանց բնակարանային պայմանները, որի կապակցությամբ դադարել է նրանց բնակարանային ապահովության իրավունքը) հարուցվել է վարչական վարույթ և լսումների օր է նշանակվել 2023 թվականի մարտի 09-ը:

### II. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

**ա)** «Հայաստան» համահայկական հիմնադրամի /այսուհետ՝ փոխատու/ և զոհված

զինծառայող Տիգրան Մերուժանի Հակոբյանի մոր՝ Մարգարիտ Վոլոդյայի Հակոբյանի /այսուհետ փոխառու/ միջև 2022թվականի դեկտեմբերի 19-ի, գրանցամատյան թիվ 16070 անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի համաձայն փոխատուն փոխառուին 3(երեք)տարի ժամկետով անհատույց օգտագործման է հանձնել Շիրակի մարզի Գյումրի համայնքի Կ.Հալաբյան փողոց 1 շենք, թիվ 3 հասցեում գտնվող իրեն պատկանող բնակարանը (այսուհետ՝ անշարժ գույք) և տրվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման №23122022-08-0061 վկայականը:

**բ)** Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 3(երեք) տարվա ընթացքում անշարժ գույքը պայմանագրին համապատասխան օգտագործելու դեպքում փոխատուի կողմից կդիտարկի անշարժ գույքի նկատմամբ փոխառուին սեփականության իրավունքի փոխանցման հնարավորությունը՝ նվիրատվության պայմանագիր կնքելու միջոցով:

## III. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի և զոհված զինծառայող Տիգրան Մերուժանի Հակոբյանի մոր՝ Մարգարիտ Վոլոդյայի Հակոբյանի միջև կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման 2022թվականի դեկտեմբերի 19-ի, գրանցամատյան թիվ 16070 պայմանագիրը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման №23122022-08-0061 վկայականը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «ՀՀ ՊՆ համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված(մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» №1419-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի 1-ին ենթակետի դրույթը(**բարելավվել են նրանց բնակարանային պայմանները, որի կապակցությամբ դադարել է նրանց բնակարանային ապահովության իրավունքը**).

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

**1.Բնակարանային պայմանների բարելավման հաշվառումից հանել՝** Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված(մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» №1419-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն բնակարանային պայմանների բարելավման հաշվառման շահառուների ամփոփ ցուցակներում հաշվառված զոհված զինծառայող Տիգրան Մերուժանի Հակոբյանի մորը՝

**1) Մարգարիտ Վոլոդյայի Հակոբյանին (մայրը),**

**2.**Քաղաքացի՝ Մարգարիտ Վոլոդյայի Հակոբյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

**3.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Մարգարիտ Վոլոդյայի Հակոբյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

16.03.2023

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. Գյումրի համայնք**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«13» մարտի 2023 թվականի № 597-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի №1419-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ԳԱՌՆԻԿ ԿԱՐԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ՝ ՆԱՐԻՆԵ ՇԱՎԱՐՇԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԵՎ ԿԱՐԵՆ ՍԱՄՎԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### I.ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 19-րդ հոդվածի, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «ՀՀ ՊՆ համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված(մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» №1419-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի 1-ին ենթակետի դրույթը(բարելավվել են նրանց բնակարանային պայմանները, որի կապակցությամբ դադարել է նրանց բնակարանային ապահովության իրավունքը) հարուցվել է վարչական վարույթ և լսումների օր է նշանակվել 2023 թվականի մարտի 09-ը:

### II. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1.Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ**

**և իրավական հիմնավորումներ.**

**ա)** «Հայաստան» համահայկական հիմնադրամի /այսուհետ՝ փոխատու/ և զոհված զինծառայող Գառնիկ Կարենի Հովհաննիսյանի մոր՝ Նարինե Շավարշի Հովհաննիսյանի /այսուհետ փոխառու/ միջև 2022թվականի դեկտեմբերի 19-ի, գրանցամատյան թիվ 9070 անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի համաձայն փոխատուն՝ փոխառուին 3(երեք)տարի ժամկետով անհատույց օգտագործման է հանձնել Շիրակի մարզի Գյումրի համայնքի Կ.Հալաբյան փողոց 1/1 շենք, թիվ 8 հասցեում գտնվող իրեն պատկանող բնակարանը (այսուհետ՝ անշարժ գույքը) և տրվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման №26122022-08-0014 վկայականը:

**բ)** Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 3(երեք) տարվա ընթացքում անշարժ գույքը պայմանագրին համապատասխան օգտագործելու դեպքում փոխատուի կողմից կդիտարկվի անշարժ գույքի նկատմամբ փոխառուին սեփականության իրավունքի փոխանցման հնարավորությունը՝ նվիրատվության պայմանագիր կնքելու միջոցով:

## III. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի և զոհված զինծառայող Գառնիկ Կարենի Հովհաննիսյանի մոր՝ Նարինե Շավարշի Հովհաննիսյանի միջև կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման 2022թվականի դեկտեմբերի 19-ի, գրանցամատյան թիվ 9070 պայմանագիրը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման №26122022-08-0014 վկայականը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «ՀՀ ՊՆ համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված(մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» №1419-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի 1-ին ենթակետի դրույթը(**բարելավվել են նրանց բնակարանային պայմանները, որի կապակցությամբ դադարել է նրանց բնակարանային ապահովության իրավունքը**).

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

**1.Բնակարանային պայմանների բարելավման հաշվառումից հանել՝** Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված(մահացած) զինծառայողների ընտանիքների

բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» №1419-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն բնակարանային պայմանների բարելավման հաշվառման շահառուների ամփոփ ցուցակներում հաշվառված զոհված զինծառայող Գառնիկ Կարենի Հովհաննիսյանի ընտանիքին՝

**1) Նարինե Շավարշի Հովհաննիսյանին(մայրը),**
**2) Կարեն Սամվելի Հովհաննիսյանին(հայրը)**

**2.**Քաղաքացիներ՝ Նարինե Շավարշի Հովհաննիսյանին և Կարեն Սամվելի Հովհաննիսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

**3.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Նարինե Շավարշի Հովհաննիսյանին և Կարեն Սամվելի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

10.03.2023

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. Գյումրի համայնք**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«13» մարտի 2023 թվականի № 596 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի №1419-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՍԱՄՎԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԵՂՈՅԱՆԻ ՄՈՐԸ՝ ՆԻՆԱ ԼՅՈՎԱՅԻ ԵՂՈՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### I.ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 19-րդ հոդվածի, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «ՀՀ ՊՆ համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված(մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» №1419-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի 1-ին ենթակետի դրույթը(բարելավվել են նրանց բնակարանային պայմանները, որի կապակցությամբ դադարել է նրանց բնակարանային ապահովության իրավունքը) հարուցվել է վարչական վարույթ և լսումների օր է նշանակվել 2023 թվականի մարտի 09-ը:

### II. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

**ա)** «Հայաստան» համահայկական հիմնադրամի /այսուհետ՝ փոխատու/ և զոհված

զինծառայող Սամվել Վարուժանի Եղոյանի մոր՝ Նինա Լյովայի Եղոյանի/այսուհետ փոխառու/ միջև 2022թվականի դեկտեմբերի 19-ի, գրանցամատյան թիվ 9057 անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի համաձայն փոխատուն փոխառուին 3(երեք)տարի ժամկետով անհատույց օգտագործման է հանձնել Շիրակի մարզի Գյումրի համայնքի Կ.Հալաբյան փողոց 1/1 շենք, թիվ 2 հասցեում գտնվող իրեն պատկանող բնակարանը (այսուհետ՝ անշարժ գույք) և տրվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման №26122022-08-0002 վկայականը:

**բ)** Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 3(երեք) տարվա ընթացքում անշարժ գույքը պայմանագրին համապատասխան օգտագործելու դեպքում փոխատուի կողմից կդիտարկի անշարժ գույքի նկատմամբ փոխառուին սեփականության իրավունքի փոխանցման հնարավորությունը՝ նվիրատվության պայմանագիր կնքելու միջոցով:

## III. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի և զոհված զինծառայող Սամվել Վարուժանի Եղոյանի մոր՝ Նինա Լյովայի Եղոյանի միջև կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման 2022թվականի դեկտեմբերի 19-ի, գրանցամատյան թիվ 9057 պայմանագիրը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման №26122022-08-0002 վկայականը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «ՀՀ ՊՆ համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված(մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» №1419-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի 1-ին ենթակետի դրույթը(**բարելավվել են նրանց բնակարանային պայմանները, որի կապակցությամբ դադարել է նրանց բնակարանային ապահովության իրավունքը**).

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

**1.Բնակարանային պայմանների բարելավման հաշվառումից հանել՝** Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված(մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» №1419-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն բնակարանային պայմանների բարելավման հաշվառման շահառուների ամփոփ ցուցակներում հաշվառված զոհված զինծառայող Սամվել Վարուժանի Եղոյանի մորը.

1) **Նինա Լյովայի Եղոյանին (մայրը),**

**2.**Քաղաքացի՝ Նինա Լյովայի Եղոյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

**3.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Նինա Լյովայի Եղոյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

10.03.2023

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. Գյումրի համայնք**